

Յիշեալ օրինակը, բարոյագիտական հարցերու կողքին կը բախի նաեւ իրաւական հարցերու: ՄԵկ կողմէն, անհատը իրաւունք ունի գիտնալ իր ծինաբանական ախտաճանաչման արդիւնքը, միւս կողմէ սակայն, ան նաեւ իրաւունք ունի մերժելու իր մասին որեւէ ծինաբանական տեղեկու-թիւն: Այլ խօսքով, անհատը թէ՛ իրաւունք ունի իմանալու եւ թէ իրաւունք ունի նաեւ չիմանալու, իր ծինաբանական գիտահետազօտութեան ար-դիւնքները: Նոյն իրաւական հարցը առկայ է նաեւ անհատի ընտանեկան պարագաներուն համար:

Ախտաճանաչման ծինաբանական գիտահետազօտութիւններ կարելի է նաեւ կատարել, սաղմի կամ պտղի վրայ, նախածննդական շրջանին: Այստեղ եւս կը յառաջանան բարոյագիտական հարցեր, մանաւանդ եթէ ծինաբանական ախտաճանաչման արդիւնքները դրական են: Այլ խօսքով, եթէ ծնողքը իմանայ, որ ժառանգական ծանր հիւանդութեամբ երեխայ մը պիտի ունենան, սաղմի արհեստական վիժումը շատ հաւանական պիտի դառնայ: Սաղմի կամ պտղի վրայ կատարուած ծինաբանական գիտահետազօտութիւնները կրնան հեշտօրէն չարաշահութեան ենթարկուիլ եւ տարբեր բարոյութիւններ յառաջացնել:

Դարմանման ծինաբանական գիտահետազօտութիւնները տակաւին կը գտնուին սկզբնական վիճակի մէջ եւ ինչպէս յիշուեցաւ այս ուղղութեամբ աշխատանքը շատ դանդաղ կ'ընթանայ:

Բարոյագիտական ու իրաւական հարցերու կողքին, մարդկային ծինե-րու միջոցով յառաջացած դեղանիւթերը, յաճախ կողմնակի անախորժ ազ-դեցութիւններ կը յայտնաբերեն: Իսկ ուղղակի ժառանգական հիւանդու-թիւն կրող ծիներու վրայ աշխատանքը, անոնց հեռացումը եւ փոխարէն առողջ ծիներու փոխպատուաստումը առայժմ ձախողած կը նկատուին:

Արդէն յիշուած **Սկզբունքներու բարոյագիտութիւնը**⁽¹²⁴⁾ (Principlism), իր չորս սկզբունքներով նաեւ նկատի կ'առնուի ծինաբանութեան բնա-գաւառէն ներս:

Ծինաբանական գիտահետազօտութիւններ կը կատարուին նաեւ անա-տուն կենդանիներու եւ բուսաբանութեան բնագաւառներէն ներս, որոնք այստեղ պիտի չքննարկուին:



(124) **Սկզբունքներու բարոյագիտութիւնը** (Principlism) տեսութեան մասին տե՛ս Մաս – 7, էջ 239: